ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2026 թվականի մարտի 25-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում կայացած «Իմպուլս» ադապտիվ սպորտի միջազգային 3-րդ փառատոնին Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցության**

2026 թվականի մարտի 25-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում տեղի է ունեցել «Իմպուլս» ադապտիվ սպորտի միջազգային 3-րդ փառատոնը, որին մասնակցության հրավեր էր ստացել նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ձևավորված պատվիրակությունը:

Պատվիրակությունը ղեկավարում էին սպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ Դավիթ Բաղումյանը և սպորտի քաղաքականության վարչության ծրագրերի իրականացման բաժնի պետ Սերգեյ Աբրահամյանը:

Պատվիրակության կազմում էին նաև «Հայաստանի պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության 8 ներկայացուցիչ (3 մարզիչ, 5 մարզիկ):

Հայաստանի Հանրապետության պատվիրակության մարզիկները հանդես եկան պարա սեղանի թենիս, պարափաուերլիֆթինգ և պարաբազկամարտ մարզաձևերից և նվաճեցին մեդալներ.

Պարա փաուերլիֆթինգ (ծանրամարտ)

- Արթուր Բաբայան՝ ոսկե մեդալ,
- Ռաֆայել Համազասպյան՝ ոսկե մեդալ,

Պարաբազկամարտ

- Արամ Մարտիրոսյան՝ ոսկե մեդալ,
- Սարգիս Մխիթարյան՝ արծաթե մեդալ,

Պարա սեղանի թենիս

- Գևորգ Բեգլարյան՝ ոսկե մեդալ:

*ՀՀ ԿԳՄՍՆ սպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ՝* *Դավիթ Բաղումյան*

*ՀՀ ԿԳՄՍՆ սպորտի քաղաքականության վարչության ծրագրերի իրականացման բաժնի պետ՝* *Սերգեյ Աբրահամյան*

*30.03.2026 թ.*